<< Մ Ե Լ Ի Ո Ր Ա Ց Ի Ա >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0812 Արարատի մարզ, գ. Հայանիստ, Էջմիածնի փ. 22, հեռ. +37496004995, էլ. փոստ՝ melioracia00@mail.ru

17.12.2020թ. № 260-Հտ Ձեր _____ №_____

«ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ռ.ԱՍԱՏՐՅԱՆԻՆ
(ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ,
Գ.Նժդեհի փ, շ.103/26, Հեռ. 044-889846, 044-889884)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

«Մելիորացիա» ՓԲԸ-ի և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի միջև 05.08.2020 թվականին կնքված ՈՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԱՇՁԲ-20/1-1 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-Ն ստանձնել էր «Մելիորացիա» ՓԲԸ-ի վարչական շենքի Ի-ին հարկի լաբորատոր սենյակների վերանորոգման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ որը համաձայն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով սահմանված Օրացուցային գրաֆիկի պահանջների պետք է ավարտվեր 30.08.2020թ.:

Հաշվի առնելով ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության հանգամանքը և այդ կապակցությամբ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ ներկայացրած առաջարկությունը՝ Պայմանագրի անբաժանելի մասը կազմող 30.08.2020թ.-ին կնքված N 1 համաձայնագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 30.09.2020թ.: «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից սահմանված նոր վերջնաժամկետը խախտելու հետևանքով, «Մելիորացիա» ՓԲԸ-ն հաշվի առնելով ՀՀ-ում սահմանված ռազմական դրությունը՝ համաձայն Պայմանագրի 3.1.2 կետի սահմանվել է աշխատանքի կատարման նոր ողջամիտ ժամկետ՝ մինչև 15.12.2020թ, սակայն նշված ժամկետի ավարտին աշխատանքները կրկին չեն իրականացվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԳՈԵԳԳՈԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և հիմք ընդունելով Պայմանագրի 3.1 և 3.2 կետերով սահմանված պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Գլխավոր տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար՝ **Ա.Մեսրոպյան**

Կատ.՝ Վ.Հովհաննիսյան
Հեռ.՝ /099/ 56-54-99